

13732

Թիւ 13 ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ Թիւ 13

SUGGESTIONS AND INSTRUCTIONS

FOR THOSE PREPARING FOR

American Citizenship

Ամերիկեան Քաղաքացի

ԸՆԼԱՆՈՒ ՀԱՄԱՐ

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ԵՒ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

BERBERIAN BOOK STORE

837 Washington Street

Boston, 11, Mass.

Տպարան «Պայքար»ի

342.7

U-51

Թիւ 18 ՀԱՍՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ ԳԲՍՏԱՆ Թիւ 18

SUGGESTIONS AND INSTRUCTIONS

FOR THOSE PREPARING FOR

American Citizenship

Ամերիկեան Քաղաքացի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ԵՒ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

BERBERIAN BOOK STORE

837 Washington Street

Boston, 11, Mass.

592 MT. AUBURN ST.
WATERTOWN, MASS.

2010

20

2001

ԵՐԿՈՒ ԽՕՍԻ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԹԵԿԱԾՈՒԻՆ

Ներկայ գրքովիլը պատրաստած ենք ղեկավարելու
ընծայելու անոնց՝ որոնք կ'ուզեն Ամերիկեան քաղա-
քացի դառնալ: Այս նպատակով հոս ամիսից ենք՝
հարց ու պատասխանի ձևով՝ կարգ մը ղեկավարներ,
որոնց ծանոթութիւնը անհրաժեշտ կը նկատուի Ա-
մերիկեան քաղաքացիական թեկնածուի մը:

Անշուշտ՝ հաւանական չէ որ քաղաքացի ըլլալ
ուզողը այս բոլոր հարցումներուն ալ ենթարկուի դա-
տարանին մէջ, սակայն նոյնքան ալ հաւանական չի
թուիր որ առանց հոս ամիսիցուած ղեկավարներուն
վրայ ո'ւնէ ծանոթութիւն ունենալու՝ կարելի ըլ-
լայ քաղաքացիական թուղթ ձեռք բերել: Իսկ ա-
ռաջին թուղթը ստանալու համար ո'չ քննութեան
հարկ կայ արդէն ու ո'չ ալ Անգլիերէն ղեկավարու:
Թեկնածուն կրնայ իր տեղին վրայ հասկնալ ո'ր դա-
տարան ղիմելու է ու հոն արդէն ղեկավարութեամբ կ'ըս-
տանայ հարկ՝ եղած պայմաններն, ինչպէս նաեւ երկ-
րորդ թուղթն՝ իրական քաղաքացիական թուղթը՝
ստանալու ժամանակ ալ կրնայ տեղւոյն դատարանէն
տեղեկանալ արդէն լրացուցիչ ալ պայմաններուն:

Մայիս 15, 1922

ՀՐԱՏԱՐԱԿԻԶՆ



62699 ախ
1445-85

ՀԱՐՑ-ՊԱՏԱՍԽԱՆ

1. Name two fundamental requirements for American citizenship.

Ի՞նչ են Ամերիկեան քաղաքացի ըլլալու երկու հիմնական պայմանները :

I. Knowledge of the English language.

II. Knowledge of American Government.

Ա. Անգլիերէն գիտնալ .

Բ. Ամերիկեան կառավարութեան կազմին տեղեակ ըլլալ :

2. Why should you know about the Constitution of the United States?

Ինչո՞ւ հարկ է Ամերիկեան Սահմանադրութեան տեղեակ ըլլալ :

— Because to become an American citizen you must take oath that you will uphold the principles of the Constitution.

Որովհետեւ Ամերիկեան քաղաքացի ըլլալու համար՝ երգումս պէտք է ընենք հաւատարիմ մնալու Սահմանադրական սկզբունքներուն :

3. Who drafted the Constitution of the United States?

Ո՞վ չինած է Միացեալ Նահանգաց Սահմանադրութիւնը :

— It was drafted by the Representatives of the PEOPLE, and was adopted by the PEOPLE in the year 1787.

Ժողովուրդին ներկայացուցիչները պատրաստած են դաշն ու ժողովուրդն ալ ընդունած է դաշն 1787-ին :

4. What is the form of government of the United States?

Ի՞նչ տեսակ կառավարութիւն ունի Միացեալ Նահանգները :

— The United States has a Republican form of government.

Միացեալ Նահանգները հանրապետական կառավարութիւն ունի :

5. What is a Republic?

Հանրապետութիւն ըսելով ի՞նչ կը հասկնանք :

— A Republic is a country in which the people elect their own officers who are responsible for their acts to the people.

Հանրապետութիւն ըսելով կը հասկնանք երկիր մը, ուր ժողովուրդը կ'ընտրէ իր պաշտօնավարները, որոնք իրենց կարգին պատասխանատու են ժողովուրդին :

6. Who rules this country?

Ո՞վ կը կառավարէ այս երկիրը :

— The people, through their duly elected representatives.

Ժողովուրդը՝ իր ըստ օրինի ընտրեալ ներկայացուցիչներով :

7. What is a Monarchy or Empire?

Միապետութիւն կամ կայսրութիւն ըսելով ի՞նչ կը հասկնանք :

— A Monarchy or Empire is a country ruled by a King or Emperor who reigns by claimed hereditary right.

Միապետութիւն կամ կայսրութիւն ըսելով կը հասկնանք երկիր մը՝ որու ղեկավարը կամ թագաւոր կամ կայսր է ու կ'իշխէ յանուն ժառանգական իրաւունքներու :

8. What is the Constitution of the United States?

Ի՞նչ է Միացեալ Նահանգաց Սահմանադրութիւնը :

I. It is the fundamental law of the United States.

Ա. Սահմանադրութիւնը Միացեալ Նահանգաց հիմնական օրէնքն է :

II. The Constitution gives the power to make laws to Congress, which is the legislative branch of the government of the United States.

Բ. Սահմանադրութիւնը իշխանութիւն կուտայ վեհաժողովին՝ Ամերիկեան կառավարութեան օրէնդիր բաժնին՝ օրէնքներ զծել :

III. It gives the power of enforcing the laws to the President, who is the head of the executive branch of the government of the United States.

Գ. Վեհաժողովին Վշխանութիւն կուտայ այս օրէնքները նախագահին զործադրել տալու, որ Մի-

այցեալ Նահանգաց կառավարութեան գործադիր բաժնին գլուխն է:

IV. It gives the power of interpreting the laws and judging disputes arising under the laws to the United States courts which form the judicial branch of the government of the United States.

Դ. Վեհաժողովին իշխանութիւն կուտայ օրէնքներ մեկնարանելու, դատական ատեաններու միջեւ անհամաձայնութեանց պահուն վճիռ տալու: Դատական Ատեանները Միացեալ Նահանգաց օրինարարական բաժինը կը կազմեն:

9. What are functions of the three branches of government?

Կառավարութեան երեք ճիւղերու պաշտօնն ի՞նչ է:

I. Legislative. Congress—makes the laws.

II. Executive. President—enforces the laws.

III. Judicial. United States Supreme Court—interprets the laws.

Կառավարութեան երեք ճիւղերու պաշտօնն է՝
Ա. Օրէնսդրական, որ Վեհաժողովն է ու օրէնքները կը գծէ:

Բ. Գործադիր, որու գլուխն է Նախագահը եւ որ օրէնքները կը գործադրէ:

Գ. Դատական, որ կը կազմուի Միացեալ Նահանգաց Գերագոյն Ատեանէն ու օրէնքները կը լուծարանէ:

10. What does Congress do?

Վեհաժողովին պաշտօնն ի՞նչ է:

— Congress makes the laws for the United States.

Վեհաժողովը Միացեալ Նահանգաց օրէնքները կը պատրաստէ:

11. What are the powers of Congress?

Վեհաժողովը ի՞նչ իրաւասութիւն ունի:

— Congress has the power to levy taxes, duties, imposts and excises. It has also powers to borrow money on the credit of the United States; regulate commerce; pass naturalization and immigration laws; coin money; declare war; raise and support the army and navy. Its chief duty is to care for the welfare of the United States.

Վեհաժողովը իրաւասութիւն ունի որոշելու տուրք, հարկ, մաքս եւ անուղղակի տուրք: Իրաւասութիւն ունի նաեւ Միացեալ Նահանգաց անուշիտով փոխ դրամ տանելու, վաճառականութիւնը ղեկավարելու, քաղաքացիական ու զաղթականական օրինագծեր անցնելու, դրամ կտրելու, դատերազմ հռչակելու, բանակ կազմելու եւ պարենաւորելու: Իր գլխաւոր պարտականութիւնն է Միացեալ Նահանգաց բարօրութիւնը ապահովել:

12. Can Congress pass any law in regard to religion?

Վեհաժողովը կրնա՞յ կրօնի վերաբերեալ օրէնքներ անցնել:

— No. The Constitution forbids Congress to pass any law making any church a State church, neither can it forbid religious freedom.

Ո՛րքն Սահմանադրութիւնը կ'արգիլէ Վեհաժողովին ունէ եկեղեցի պետական եկեղեցի ճանչնալ կամ անցնել ունէ օրէնք՝ որ կրնայ կրօնական ազատութիւնը կաշկանդել:

13. What other guarantees are there in the Constitution?

Սահմանադրութիւնը ուրիշ ի՞նչ կ'երաշխաւորէ:

— Freedom of speech and of the press, the right of the people peaceably to assemble, and to petition the government for a redress of grievances.

Մամուլի եւ խօսքի ազատութիւն, իրաւունք՝ ժողովներ գումարելու առանց խռովութեան ու իրենց զժգոհութիւնը կառավարութեան հաղորդելու:

14. When and where does Congress meet?

Ե՞րբ եւ ո՞ւր կը գումարուի Վեհաժողովը:

— Congress meets on the first Monday of December of each year in Washington, D. C.

Վեհաժողովը կը գումարուի ամէն տարւոյ Դեկտեմբերի առաջին երկուշաբթին, Ուաշինկթըն, Տ. Ք. -ի մէջ:

15. How long is it in session?

Ո՞րքան երկարատեւ նիստ կ'ունենայ:

— Congress is in session until it has transacted all the business before it, except that it must adjourn every other year not later than March 4. The President may call an extra session at any time he deems necessary.

Այնքան՝ որքան պէտք ունի բոլոր գործառնութիւնները կատարելու համար, միայն թէ յաջորդ

տարուան Մարտ 4-ին պէտք է ժողովը փակուած ըլլայ: Նախագահը կրնայ արտակարգ նիստ գումարել, եթէ անհրաժեշտ նկատէ:

16. How does Congress transact its business?

Վեհաժողովը ի՞նչպէս կը կատարէ իր գործառնութիւնները:

— Each branch determines for itself how it shall transact business, except that each bill must be read three times publicly in each branch before being voted upon, and every bill before being submitted to the President for his signature or veto must be passed by each House separately.

Իւրաքանչիւր մարմին ինքնիրեն կ'որոշէ ի՞նչպէս կատարելու է գործառնութիւնները, բացի ամէն բանադիմ քուէարկելէ առաջ հարկ է երեք անգամ բոլորի ներկայութեան կարդացուի: Եւ ամէն օրինադիմ Նախագահին յանձնուելէ առաջ՝ հարկ է իւրաքանչիւր Տան հաւանութեան արժանանայ: Օրինադիմը Նախագահին կը յանձնուի իրմէ ստորագրուելու կամ մերժուելու համար:

17. What is a bill?

Ի՞նչ է օրինադիմ մը:

— A bill presented before a legislative body is a written or printed document containing a proposed law.

Օրինադիմը երեսփոխանական մարմնին ներկայանալիք գրեալ կամ տպագրեալ օրինաթուղթ մըն է, որ առաջարկեալ օրէնք մը կը պարունակէ:

18. What is the veto power?

Ի՞նչ է մերժման իրաւասութիւնը:

— When a bill is passed by Congress it is presented to the President for signature before it becomes law. If he does not favor the bill he vetoes it (rejects it). The bill is then returned to Congress with his objections. Then if two-thirds of the members of each House favor the bill by their votes, it becomes a law.

Երբ Վեհաժողովը օրինադիժ մը վաւերացնէ՝ այդ օրէնք դառնալէ առաջ Նախագահին կը ներկայացուի՝ իր ստորագրութիւնը ընդունելու համար: Եթէ Նախագահը օրինադիժը աննպաստ նկատէ՝ կը մերժէ զայն, ու իր առարկութիւններով միասին Վեհաժողովին կը վերադարձնէ: Իսկ եթէ Խորհրդադատան անդամներու երկու-երրորդը իրենց քուէով կրկին վաւերացեն զայն՝ օրինադիժը այլեւս օրէնք կը դառնայ:

19. Must every law be signed by the President?

Իւրաքանչիւր օրէնք անպատճառ պէ՞տք է Նախագահին ստորագրութիւնը կրէ:

— If the President keeps a bill ten days after passage without either signing or vetoing it, then the bill becomes a law.

Եթէ Նախագահը օրինադիժ մը ստանալէն յետոյ տասը օր պահէ զայն, առանց ստորագրելու կամ մերժելու, այդ պարագային օրինադիժը ընդունուած օրէնք կը դառնայ:

20. What is Congress composed of?

Ի՞նչպէս կը կազմուի Վեհաժողովը:

— Two Houses:

I. The Senate.

II. House of Representatives.

Երկու խորհրդատունով:—

Ա. Ծերակոյտ:

Բ. Երեսփոխանական Տուն:

21. What is the Senate and what are its members called?

Ի՞նչ է Ծերակոյտը եւ ի՞նչ կը կոչուին իր անդամները:

— The Senate is the Upper House of Congress, and its members are called Senators.

Ծերակոյտը Վեհաժողովին վերին մասնաբաժինն է, ու իր անդամները կը կոչուին Ծերակուտականք:

22. How are the Senators elected?

Ծերակուտականները ի՞նչպէս կ'ընտրուին:

— The Senators are elected by the people—one every third year—from each State for six years.

Երկու Ծերակուտական կ'ընտրուին ժողովուրդին կողմէ ամէն երեք տարին մէկ անգամ, իւրաքանչիւր նահանգէ վեց տարուայ համար:

23. What are the Constitutional qualifications of a United States Senator?

Ի՞նչ օրինական երաշխիքներ ունենալու է Միացեալ Նահանգաց Ծերակուտական մը:

— He must be thirty years old, nine years a citizen of the United States, and a resident of the State from which he is chosen.

Տարիքը երեսունէն վար ըլլալու չէ: Ինը տարի Ամերիկեան քաղաքացի ըլլալու է, ու զինք ընտրող նահանգին բնակիչը:

24. Who are the two United States Senators from?

Որո՞նք են Միացեալ Նահանգաց Նահանգին երկու Ծերակուտականները:

— Mr. and Mr.
Տիար եւ Տիար:

25. Who presides over the United States Senate, and what is his name?

Ո՞վ կ'ատենապետէ Միացեալ Նահանգաց Ծերակոյտին ու անունն ի՞նչ է:

— The Vice-President of the United States. The present Vice-President is Mr.

Փոխ-Նախագահը: Ներկայ Փոխ-Նախագահին անունն է Տիար:

26. What is the House of Representatives, and what are its members called?

Ի՞նչ է Երեսփոխանատունը եւ ի՞նչ կը կոչուին իր անդամները:

— It is the Lower House of Congress, and its members are called Congressmen.

Վեհաժողովին վարի մասնաբաժինն է ան, ու իր անդամները կը կոչուին Երեսփոխանք:

27. How is the House of Representatives made up?

Երեսփոխանատունը ի՞նչպէս կը կազմուի:

— Each State is divided into Congressional Districts of practically equal population, and each District elects one United States Representative.

Ամէն նահանգ բաժնուած է զրեթէ նոյն բնակչութիւն ունեցող Վեհաժողովական կեդրոններու եւ ամէն մէկ կեդրոն կ'ընտրէ մէկ Երեսփոխան:

28. How are the United States Representatives or Congressmen elected?

Ի՞նչպէս կ'ընտրուին Միացեալ Նահանգաց Երեսփոխանները:

— They are elected by the direct vote of the people for a term of two years.

Ժողովուրդը կ'ընտրէ զիրենք ուղղակի քուէարկութեամբ՝ երկու տարուան պաշտօնավարութեան ժամար:

29. What are the Constitutional qualifications of a Congressman?

Ի՞նչ են Երեսփոխանի մը օրինական երաշխիքները:

— He must be twenty five years old, seven years a citizen of the United States, and a resident of the State from which he is chosen.

Քսանեւէնից տարեկանէն վար ըլլալու չէ, եօթը տարուան քաղաքացի ըլլալու է, ու զինք ընտրող նահանգին բնակիչը:

30. Who is the Congressman from your Congressional District?

Ձեր գաւառաբաժնին Երեսփոխանն ո՞վ է :

— Mr.

Տիար

31. Who presides over the United States House of Representatives?

Միացեալ Նահանգաց Երեսփոխանատան ո՞վ կ'աւանդուի :

— The Speaker, a member of the House, is chosen by vote of the members as presiding officer.

Բանապետն, որ Սորհրդատան անդամներէն մին է, ու իրենց քուէով կ'ընտրուի իրր ատենապետող պաշտօնեայ :

32. What special powers has the United States House of Representatives?

Ի՞նչ մասնաւոր իրաւասութիւններ ունի Միացեալ Նահանգաց Երեսփոխանատունը :

— The House of Representatives may initiate bills for raising revenue, and may impeach United States officials.

Երեսփոխանատունը կրնայ եկամուտի յաւելման օրինադէր առաջարկել ու Միացեալ Նահանգաց պաշտօնեաներն ամբաստանել :

33. What branch of Congress approves United States treaties with foreign countries?

Վեհաժողովին ո՞ր մասնաբաժինը կը վաւերացրէ Միացեալ Նահանգաց օտար պետութեանց հետ կնքած դաշնագրերը :

— The United States Senate may approve or reject treaties with foreign countries.

Միացեալ Նահանգաց Ծերակոյտը կրնայ վաւերացնել կամ մերժել օտար պետութեանց հետ կնքուած դաշնագրերը :

34. Who is the Chief Executive and head of the government of the United States?

Միացեալ Նահանգաց կառավարութեան ղլխաւոր Վարչապետն ո՞վ է :

— The President.

Նախագահը :

35. What other office does the President hold?

Նախագահը ուրիշ ի՞նչ պաշտօն կը վարէ :

— He is the Commander-in-Chief of the Army and Navy.

Ինքն է Միացեալ Նահանգաց Ծովային եւ Ցամաքային զօրութեան Ընդհանուր Հրամանատարը :

36. How is the President elected?


Նախագահն ի՞նչպէս կ'ընտրուի :

— The President is elected by the people, who elect Presidential Electors. These Electors in turn vote for the President.

Նախագահը կ'ընտրուի ժողովուրդին կողմէ, որ նախ քուէով կ'որոշէ իր ընտրողները, ու ապա ընտրողներն ալ իրենց կարգին կ'որոշեն Նախագահացուն :

37. How many Presidential Electors are there?

Քանի՞ Նախագահ Ընտրողներ կան :



-- There are as many as there are United States Senators and Representatives together.

Ճիշտ Միացեալ Նահանգաց Յերակուսականներուն եւ Երեսօրհաններուն թուին հաւասար :

38. What is the length of the term of office of the President?

Նախագահը քանի՞ տարի կը պաշտօնավարէ :

-- Four years.

Չորս տարի :

39. What is the name of our present President?

Մեր ներկայ Նախագահին անունն ի՞նչ է :

-- President

Նախագահ

40. Who was the first President of the United States?

Միացեալ Նահանգաց առաջին նախագահն ո՞վ էր :

-- George Washington. He is often called the "Father of our Country."

Ճորճ Ուաշինկթըն, որ յաճախ «Մեր Երկրին Հայրը» կ'անուանուի :

41. If the President dies, or resigns from office, who takes his place?

Եթէ Նախագահը մեռնի՝ կամ հրաժարի՝ ո՞վ կ'անցնի իր տեղը :

-- The Vice-President.

Փոխ-Նախագահ :

42. How is the Vice-President elected?

Փոխ-Նախագահն ի՞նչպէս կ'ընտրուի :

-- The Vice-President is elected in the same manner as the President.

Ճիշտ Նախագահին ընտրուած կերպով :

43. Whom does the President of the United States have as his advisors?

Որո՞նք են Միացեալ Նահանգաց Նախագահին խորհրդատուները :

-- The Cabinet. The President's Cabinet is composed of the Secretaries of the ten Executive Departments of the Federal Government. The members of the Cabinet are:

1. The Secretary of State.
2. The Secretary of the Treasury.
3. The Secretary of War.
4. The Attorney-General.
5. The Postmaster General.
6. The Secretary of the Navy.
7. The Secretary of the Interior.
8. The Secretary of Agriculture.
9. The Secretary of Commerce.
10. The Secretary of Labor.

Նախագահին խորհրդատուն է Դաշխիճը, որ կը կազմուի զաշնակից կառավարութեանց տասը դոքտոր-ծաղիր մասնաբաժիններու քարտուղարներով կամ նախարարներով : Դաշխիճին անդամներն են .--

1. Պետական Նախարար :
2. Գանձալին Նախարար :
3. Պատերազմական Նախարար :

4. Ընդհանուր Դատարար :
5. Թղթատարական Վերատեսուչ :
6. Ծառային Նախարար :
7. Ներքին Գործոց Նախարար :
8. Երկրագործական Նախարար :
9. Առևտրական Նախարար :
10. Բանուորական Նախարար :

44. Who officially represents the United States in foreign countries?

Օտար երկիրներու մէջ՝ Միացեալ Նահանգաց պաշտօնական ներկայացուցիչն ո՞վ է :

— Ambassadors or ministers represent the United States at the seats of government of the foreign countries, while Consuls represent the United States in the principal cities of the world.

Աշխարհի գլխաւոր քաղաքներուն մէջ՝ Միացեալ Նահանգաց ներկայացուցիչն է Հիւպատոսը, իսկ ուրիշ կառավարանիստ կեդրոններու մէջ՝ Դեսպանը կամ նախարարը :

45. Who appoints Ambassadors and Consuls?

Ո՞վ կ'որոշէ Դեսպաններն ու Հիւպատոսները :

— The President, with the advice and consent of the Senate.

Նախագահը՝ խորհրդակցութեամբ եւ հաւանութեամբ Ծերակոյտին :

46. Who interprets the laws of the United States?

Ո՞վ է Միացեալ Նահանգաց օրինաց մեկնաբանը :

— The United States courts, which interpret the meaning of the Constitution, try violators of

Federal laws, and determine whether laws are in accord with the spirit and letter of the Constitution.

Միացեալ Նահանգաց Դատական Ատեանները, որոնք կը մեկնեն Սահմանադրութեան իմաստը, դատի կ'ենթարկեն օրինադանցները, եւ կ'որոշեն թէ օրէնքները կը համապատասխանեն Սահմանադրութեան ոգւոյն ու տառական իմաստին :

47. What is the highest court in the United States?

Ո՞րն է Միացեալ Նահանգաց Բարձրագոյն Դատարանը :

— The Supreme Court is the highest court, and the court of last resort.

Բարձրագոյն Դատարանն է Գերագոյն Ատեանը, որ միանգամայն վերջին դիմումատեղին է :

48. How many judges are there in the United States Supreme Court?

Միացեալ Նահանգաց Գերագոյն Ատեանին մէջ քանի՞ դատաւոր կայ :

— The United States Supreme Court has nine judges,—one Chief Justice and eight Associate Justices.

Միացեալ Նահանգաց Գերագոյն Ատեանը ունի ինը դատաւորներ.— մէկ Գլխաւոր Արդարադատ, ու ութը Կցորդ Դատաւորներ :

49. How are they appointed?

Ասոնք ի՞նչպէս կ'ընտրուին :

— They are appointed by the President, with the consent of the Senate.

Նախագահը կ'ընտրէ զիրենք, Յերակոյսին հասնութեամբ :

50. Where does the Supreme Court hold its sessions?

Գերագոյն Ատեանը ո՞ւր նիստ կ'ունենայ :

— In the Capitol of the United States, Washington, D. C.

Միացեալ Նահանգաց մայրաքաղաքին մէջ, Ուաշինկթըն, Տ. Ք. :

51. What is the only crime the Constitution defines?

Ո՞ր մէկ տրարքը Սահմանադրութեան կողմէ ուճիր նկատուած է :

— Treason. The Constitution says that it shall consist in levying war against the United States, or in adhering to its enemies, giving them aid and comfort.

Դաւաճանութիւնը : Սահմանադրութիւնը ոճիր կը սեպէ Միացեալ Նահանգաց դէմ պատերազմ հրուշակել, կամ իր թշնամեաց յարիւր՝ անոնց օժանդակութիւն կամ բաւարարութիւն հայթայթելով :

52. How are the other crimes determined?

Ուրիշ ոճիրներ ի՞նչպէս կը վճռուին :

— Crimes against the United States other than treason are defined by acts of Congress. Any State,

either in its Constitution or through acts of its Legislature, may define these same crimes, and may add others to the list.

Բացի դաւաճանութենէ՝ մնացեալ ոճիրները կ'որոշուին Վեհաժողովին վճիռներով : Ո՛րեւէ Նահանգ, կամ իր Սահմանադրութիւնով եւ կամ իր Օրէնդագրական որոշումներով կրնայ սահմանել այս ոճիրներն ու անոնց ջանկն ընդարձակել :

53. Can a person who committed a crime be arrested in a State other than that in which the crime was committed?

Օրինակա՞ն է ոճրագործ մը իր ոճիրին վայրէջ ուրս ուրիշ նահանգի մը մէջ ձերբակալել :

— Yes, on demand of the Governor of the State in which the crime was committed, provided it is an extraditable offence.

Այո՛. սակայն ոճիրը գործուած Նահանգին կառավարիչին մասնաւոր հրամանագրով, ու պայմանաւ որ յանցանքը արարյանձնուած պահանջող յանցանք մը ըլլայ :

54. How and where must persons accused of crime be tried?

Ոճրագործութեամբ զրպարտեալները ո՞ւր եւ ի՞նչպէս կը վճռադատուին :

— They must be tried by a jury of twelve men, and in the State where the crime was committed.

Ոճիրը գործուած Նահանգին մէջ՝ տասներկու երգտեալ դատարաններու որոշումով :

55. Can a citizen be deprived of life, liberty or property?

Կարելի՞ է քաղաքացի մը իր կեանքէն, ազատութենէն կամ ստացուածքէն զրկել:

— Yes, but no citizen can be deprived of life, liberty or property without the due process of law

Այո. սակայն քաղաքացի մը չէ կարելի զրկել իր կեանքէն, ազատութենէն կամ ստացուածքէն՝ առանց օրինաց պատշաճ կիրառութեան:

56. How many States are there in the United States?

Միացեալ Նահանգները քանի՞ Նահանգ ունի:

— The United States is a Union of forty-eight States, each State having an independent form of government, and yet being amenable to the national government.

Միացեալ Նահանգները քառասունութը Նահանգներու Միութիւն մըն է, իւրաքանչիւր Նահանգ իր կառավարական ուրոյն ձեւով, սակայն ենթարկեալ ազգային կառավարութեան:

57. What do the words “United States” mean?

«Միացեալ Նահանգներ» ըսելով ի՞նչ կը հասկընանք:

— “United States” means forty-eight States in the United States, joined together into one Nation.

Միացեալ Նահանգներ կը նշանակէ 48 Նահանգներու խմբակցութիւն մը, որ համաձուլուած կազմած է Ազգ մը:

58. What is a State?

Ի՞նչ է Նահանգ մը:

— A State is a body of people under one government, which although subject to the laws of the National Government, has a Constitution and a government of its own, with every right to make and execute laws, provided they harmonize with the Constitution of the United States.

Նահանգը ժողովուրդի զանգուած մըն է, համախմբուած մէկ կառավարութեան ներքեւ, ու թէպէտեւ ենթակայ Ազգային կառավարութեան՝ սակայն ունի իր ուրոյն կառավարութիւնը, իրաւունք՝ օրէնքներ կերտելու ու գործադրելու, պայմանաւ, սակայն որ այս օրէնքները ներդաշնակին Միացեալ Նահանգաց Սահմանադրութեան հետ:

59. What is the State Constitution?

Ի՞նչ է Նահանգային Սահմանադրութիւնը:

— The State Constitution is the fundamental law of the State, and no other State law may conflict with it.

Նահանգային Սահմանադրութիւնը նոյն նահանգին հիմնական օրէնքն է, եւ ուրիշ ո՛րեւէ նահանգային օրէնք կրնայ խաչաձեւել զայն:

60. How may the State Constitution be amended?

Ի՞նչպէս կարելի է Նահանգային Սահմանադրութիւնը փոխել:

— The Constitution may be amended if the proposed amendment passes the General Court (State

Senate and House of Representatives) two years in succession, and is then approved by the majority of the voters at a general election.

Սահմանադրութիւնը կարելի է փոխել, եթէ առաջարկեալ փոփոխումը ընդունուի Ընդհանուր Վաճառքէն՝ (Յերակոյտէն ու Երեսփոխանատունէն) երկու տարի յաջորդաբար՝ եւ ընդհանուր քուէարկութեան ժամանակ քուէատուներու մեծամասնութեան հաւանութեան արժանանայ:

61. Who executes the laws of the United States?
Ո՞վ կը գործադրէ Միացեալ Նահանգաց օրէնքներն:

— The President Mr.
Նախագահն, Տիար

62. Who executes the laws of the State?
Ո՞վ կը գործադրէ նահանգին օրէնքները:

— The Governor Mr.
Կառավարիչն, Տիար

63. Who is at the head of the City Government?
Ո՞վ է քաղաքին կառավարութեան գլուխ:

— The Mayor Mr.
Քաղաքապետն, Տիար

64. Who can be a President of the United States?
Ո՞վ կրնայ Միացեալ Նահանգաց Նախագահ լինիլ:

— Only a natural born citizen of the United States.

Միայն ծննդեամբ Միացեալ Նահանգաց քաղաքացի եղող մը:

65. How many times can a President be re-elected?

Նախագահը քանի՞ անգամ կրնայ վերընտրուիլ:

— The Constitution does not limit the number of terms.

Սահմանադրութիւնը չի սահմանափակեր՝ Նախագահին վերընտրութիւնը:

66. What is the rule in this respect according to precedent?

Ըստ նախադիպաց այս նկատմամբ ի՞նչ կանոն կ'ըլլա՞ծ:

— It is that a President should not hold office or be re-elected beyond his second term.

Կանոնն այն է թէ՛ Նախագահ մը վերընտրուելու չէ՛ եւ կամ՝ սրաչափ վարելու չէ՛ իր երկրորդ պաշտօնաշրջանէն անդին:

67. What is a county?

Ի՞նչ է գաւառ մը:

— A county is a division of a State set apart for the purpose of aiding in carrying on the judicial branch of the State Government.

Գաւառ կը կոչուի Նահանգի մը մէկ մասը, որ յատկացուած է նահանգային կառավարութեան օրինական մարմինն օժանդակելու:

68. Who is the chief executive officer of the county?

Ո՞վ է գաւառի մը գլխաւոր գործադիր պաշտօնական:

— The chief executive officer of the county is the sheriff.

Գաւառի մը ղլխաւոր ղործադիրն է ատենակալն :

69. How is the county sheriff elected?

Գաւառին ատենակալն ի՞նչպէս կ'ընտրուի :

— He is elected by the registered voters of the county for a term of five years.

Գաւառին արձանագրեալ քուէատուները կ'ընտրեն զայն՝ հինգ տարուան պաշտօնավարութեան համար :

70. What are some of the duties of a sheriff?

Ի՞նչ են ատենակալի մը կարգ մը պարտականութիւնները :

— The sheriff appoints as many deputies as are needed for the enforcement of the law and maintenance of peace in the county. He is the custodian of county prisoners.

Ատենակալին պաշտօնն է որոշել հարկ եղածին չափ ներկայացուցիչներ՝ օրինաց ղործադրութեան ու քաղաքին անդորրութիւնը ապահովելու համար : Ինչն է նաեւ զաւառի բանտարկեւոց խնամակալն :

71. In whom is the legislative authority of the county vested?

Որո՞ւ շնորհուած է զաւառին օրէնդրական իրաւասութիւնը :

— The legislative authority is given to a board of the three county commissioners.

Օրէնդրական իրաւասութիւնը տրուած է զաւառին երեք պաշտօնակատարներէ կազմուած յանձնախումբին :

72. How does a county commissioner secure his office?

Գաւառին պաշտօնակատարն ի՞նչպէս կ'ստանայ իր պաշտօնն :

— The county commissioners are elected by the registered voters of the county for a three-year term.

Գաւառին արձանագրեալ քուէատուները կ'ընտրեն զիրենք՝ երեք տարուան պաշտօնավարութեան համար :

73. What are the duties of county commissioners?

Գաւառին պաշտօնակատարներու պարտականութիւնն ի՞նչ է :

— The county commissioners are responsible for the expenditure of the county money. They look after the county poor, and the county property in the form of court houses, jails, poor farms, roads and bridges.

Գաւառին պաշտօնակատարները պատասխանատու են զաւառին դրամը ծախսուելու խնդրոյն, իրենք խնամք կը տանին զաւառին չքաւորներուն, ու զաւառին սեպհականութիւն եղող դատարաններուն, բանտերուն, ագարակներուն, ճամբաներուն ու կամուրջներուն :

74. What courts are held in a county?

Գաւառ մը ի՞նչ դատարաններ ունի :

— Probate court, masters in chancery, district courts, and the State Superior Court.

Կտակադատ ատեան, կալուածային հաշտա-

րարք, գաւառային ատեան եւ նահանգային դերա-
դոյն ատեան:

75. What is the probate court?

Ի՞նչ է կտակադատ ատեանը:

— The probate court has jurisdiction in settle-
ment of estates, care of orphans and other persons
needing guardians, and in changes of names of per-
sons desiring legally to make such changes.

Կտակադատ ատեանն իրաւասութիւն ունի վըճ-
ռելու կալուածի վերաբերեալ դատեր, խնամք տա-
նիլ որբերու եւ ալլ խնամակարօտ անձերու, խնչպէս
նաեւ թոյլտուութիւն տալ անոնց՝ որոնք կ'ուզեն
օրինական կերպով իրենց անունը փոխել:

76. What are the masters in chancery?

Ի՞նչ պաշտօն ունին կալուածային հաշտարար-
ներն:

— Masters in chancery are persons who act as
legal arbitrators in settlements involving property.

Կալուածային հաշտարարներու պաշտօնն է հաշ-
տարարի դեր կատարել՝ կալուածի հետ կապ ունե-
ցող դատերու մէջ:

77. What is the district court?

Ի՞նչ է գաւառային ատեանը:

— The district court has jurisdiction of civil cases
in districts made up of counties or parts of counties.

Գաւառային ատեանը իրաւասութիւն ունի քա-
ղաքական դատերու միջամտելու, որոնք կրնան տե-
ղի ունենալ գաւառակազմ կամ մասամբ գաւառա-
կազմ եկզրոններու մէջ:

78. When does the State Superior Court sit in the
counties?

Նահանգային Գերագոյն Ատեանը ե՞րբ նիստ կը
գումարէ գաւառներու մէջ:

— The State Superior Court sits in the counties
at certain periods of the year to try major criminals
and civil cases, to grant divorces, to try appeal
cases, and to grant citizenship to those who pass
the naturalization examination.

Նահանգային Գերագոյն Ատեանը տարուան որոշ
ժամանակներուն նիստ կը կատարէ գաւառներու մէջ՝
դատաւճռելու մեծ ոճրագործներ, քաղաքական յան-
ցապարտներ, կատարել ամուսնալուծումներ, ձձռել
վերաքննական դատերու և քաղաքացի ընդունիլ ա-
նոնք՝ իորոնք հպատակութեան նախնական քննու-
թիւնն անցեր են:

79. What county officer keeps a record of the
deeds to property in the county?

Գաւառի ո՞ր պաշտօնեան կը պահէ տեղին կալ-
ուածաթղթերու արձանագրութիւնը:

— The registerer of the deeds.

Կալուածագրերու ղիւանագպիրը:

80. What is a city?

Ի՞նչ է քաղաք մը:

— A city is a community of 12,000 or more in-
habitants, which obtained a charter from the State
Legislature upon petition.

Քաղաք մը 12,000 բնակչութիւն ունեցող վայր

մըն է, որ նահանգային օրէնսդրութենէն հրովարտակ ընդունած է :

81. What is a city charter?

Ի՞նչ է քաղաքային հրովարտակը :

— A city charter is the fundamental law of the city.

Հրովարտակը քաղաքին հիմնական օրինաթուղթն է :

82. What is the chief executive of the city called?

Ո՞վ է քաղաքի մը գլխաւոր վարիչը :

— The chief executive of the city is usually called mayor, but in some cities which have commission government he may be called the president of the commission.

Քաղաքի մը գլխաւոր վարիչը սովորաբար քաղաքապետն է, բայց կարգ մը քաղաքներ, որոնք յանձնախոտար կառավարութիւն մը ունին՝ այդ քաղաքապետն նախագահ յանձնախումբի կարելի է կոչել :

83. What are the duties of the mayor?

Քաղաքապետին պաշտօնն ի՞նչ է :

— The mayor has the power to appoint certain city officials. He approves or vetoes the ordinances (city laws) passed by the legislative department of the city, and enforces the laws in the city through various sub-departments. He prepares the annual budget showing the amount of money to be spent in conducting the city government for the year. He is the official representative of the city on public occasions.

Քաղաքապետն իրաւասութիւն ունի ընտրելու քաղաքային պաշտօնեաներ : Ինք կը վաւերացնէ կամ կը մերժէ քաղաքին օրէնսդրական մարմնին շինած օրէնքներն, ու զանազան մարմիններու միջոցով օրէնքը կը զօրծադրէ : Ինքը կը պատրաստէ տարեկան ելեւմտացոյցը, որ կը սահմանէ ո՛րքան դրամ ծախսուելու է տարուան մը ընթացքին՝ քաղաքապետութեան գործերը վարելու համար : Հանրային բրնայի կրող սարագաններուն՝ ինքն քաղաքին ընդհանուր ներկայացուցիչն է :

84. What is a commission government of the city?

Ի՞նչ է քաղաքային յանձնակատար կառավարութիւնը :

— A few cities have small commissions of not more than nine men, who are elected for terms of office not exceeding three years. Only part of them are elected each year, and they may be re-elected. They are chosen by the registered voters of the whole city.

Քանի մը քաղաքներ իննէն ոչ աւելի անձերով կազմուած յանձնախումբ մը ունին, որոնք կ'որոշուին երեք տարուան պաշտօնավարութեան համար : Ասոնցմէ ամէն տարի մաս մը միայն կ'ընտրուի, ու կրնայ վերընտրուիլ ալ՝ ամբողջ քաղաքին արձանագրեալ քուէատուներուն կողմէ :

85. What is a legislative branch of a city composed of?

Քաղաքի մը օրէնսդրական մարմինը ի՞նչպէս կը կազմուի :

— In many cities the legislative branch is made up of aldermen and common council. The duties of the legislative department are to pass city ordinances; to approve or reject appointments made by the mayor; to select certain officers themselves; to approve or reject the financial budget prepared by the mayor.

Շատ մը քաղաքներու մէջ օրէնսդրական մարմինը կը կազմուի թաղապետէ մը ու խորհրդատոյովէ մը: Օրէնսդիր մարմինն պաշտօնն է քաղաքային օրէնքներ անցնել, ընդունիլ կամ մերժել քաղաքապետին ընտրած պաշտօնեաներն ու անոնց տեղ ուրիշ կարգ մը պաշտօնեաներ կոչել, հաւանութեան կամ մերժման ենթարկել քաղաքապետին ելեւմտացոյցն:

86. What is the judicial branch of the city?

Ի՞նչ է քաղաքի մը դատական մարմինը:

— The police courts and justices who try all lesser crimes and misdemeanors and minor cases.

Ոստիկանական եւ արդարադատատեաններն, որոնք կը վճռեն բազմաթիւ աննշան ոճիրները, անկարգութիւնները ու այլ մանր մուկեր դատեն:

87. What is a town?

Ի՞նչ է աւան մը:

— A town is a minor civil division of a county, and is governed by the registered voters of the town coming together each year in a town meeting. Its affairs, between town meetings, are directed by a board of selectmen, usually chosen every year by the town meeting.

Աւանը զաւանի մը քաղաքային մէկ սկզբնական բաժանումն է, ու կը ղեկավարուի տեղւոյն արձանագրեալ քուէատուներով, որոնք տարին մէկ անգամ ղիւանատոյով կը գումարեն: Իրենց զործառնութիւնները կը ղեկավարեն ղիւանապետներն, որոնք ղիւանատոյովէն կ'ընտրուին լամէն տաքի:

88. Did you ever read the Constitution?

Սահմանադրութիւնը կարդացա՞ծ էք:

— Yes, Sir.

Այո՛, Տէր:

89. Are you in sympathy with people who are opposed to organized government?

Կազմակերպեալ կառավարութեան հակառակդ, անձերու կը համակրի՞ք:

— No, Sir.

Բնաւ:

HISTORY QUESTIONS.

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՀԱՐՑԵՐ

1. Who discovered America?

Ո՞վ գտաւ Ամերիկան:

— Christopher Columbus.

Քրիստափոր Բօլոմպոս:

2. When was America discovered?

Ե՞րբ գտնուեցաւ Ամերիկան:

— October 12, 1492.

Հոկտեմբեր 12, 1492-ին:

3. Of what country was Columbus a native?

Բնիկ ի՞նչ երկրացի էր Բօլոմպոս:

— Christopher Columbus was a native of Italy.

Քրիստափոր Բօլոմպոս բնիկ Իտալացի էր:

4. What country employed him when he discovered America?

Ամերիկան գտած ժամանակ՝ Բօլոմպոս ի՞նչ երկրի կը ծառայէր:

— Spain.

Սպանիոյ:

5. Where was the first settlement in what is now the United States, and by what country?

Միացեալ Նահանգաց մէջ ո՞ր եղաւ առաջին գաղթավայրն եւ ո՞ր աեղացի էր այդ գաղութն:

— At St. Augustine, Fla., by Spain.

Գաղութն Սպանիացի էր ու առաջին գաղթավայրն էր Սենդ Օգոստիանիա, Ֆլորիդա:

6. Where and when was the first English settlement.

Ե՞րբ եւ ո՞ր հիմնուեցաւ առաջին Անգլիական գաղթավայրն:

— At Jamestown, Va., in 1607.

Ճէյմզթաուն, Վիրճինիոյ մէջ՝ 1607-ին:

7. Why did the Pilgrims come to America?

Ինչո՞ւ Ուիտաւորներն Ամերիկա եկան:

— To seek religious freedom.

Կրօնական ազատութիւն գտնելու:

8. What were the thirteen colonies?

Որո՞նք էին տասներեք գաղթավայրերն:

— Massachusetts, New Hampshire, New York, Maryland, Connecticut, Rhode Island, Delaware, North Carolina, New Jersey, South Carolina, Pennsylvania, Georgia and Virginia.

9. What was the Revolutionary War?

Շեղափոխական Պատերազմն ի՞նչ էր:

— The rebellion of the thirteen colonies against their mother country, England.

Տասներեք գաղութներու ըմբոստացումն էր՝ ընդդէմ իրենց մայր երկրին, Անգլիոյ,

10. Why was it fought?

Ինչո՞ւ կռիւ ծագեցաւ:

— Because the colonies were taxed without having representation in English Parliament.

Արովհետեւ Անգլիա զաղթականներուն վրայ
աուրբ դրաւ, առանց սակայն անոնցմէ Խորհրդարա-
նին մէջ ներկայացուցիչ ընդունելու:

11. When did the thirteen colonies declare their
independence against England?

Տասներեք զաղթականութիւններն ե՞րբ իրենց
անկախութիւնը հռչակեցին Անգլիոյ դէմ:

— July 4, 1776.

Յուլիս 4, 1776-ին:

12. What were the first battles of the Revolution?
Որո՞նք են Յեղափոխութեան առաջին ճակատա-
մարտներն:

— The battles of Concord and Lexington, in
Massachusetts, April 9, 1775.

Քանքըրտի եւ Լէքսինկթընի ճակատամարտնե-
րը, Մէսէչուսեցի մէջ, Ապրիլ 9, 1775-ին:

13. Who was the Commander-in-Chief of the
American Army in the Revolution?

Յեղափոխութեան ժամանակ Ամերիկեան բանա-
կին Ընդհանուր Հրամանատարն ո՞վ էր:

— George Washington.

Ճորճ Ուաշինկթըն:

14. With whom did the United States fight in
1812?

Միացեալ Նահանգներ որո՞ւ հետ պատերազմե-
ցաւ 1812-ին:

— England.

Անգլիոյ հետ:

15. Who was then President?

Այն ժամանակին նախագահն ո՞վ էր:

— James Madison.

Ճեյմս Մէտիսըն:

16. When was the Mexican War fought?

Մեքսիկեան պատերազմը ե՞րբ ծագեցաւ:

— In 1847.

1847-ին:

17. What was the Civil War?

Ի՞նչ էր Քաղաքային Պատերազմը:

— The Civil War was a struggle between the
northern and southern States, because its southern
States wished to leave or secede from the Union.

Քաղաքային Պատերազմը հիւսիսային եւ հա-
րաւային նահանգներու միջեւ բաղխում մըն էր,
որովհետեւ հարաւային նահանգներն ուզեցին բաժ-
նուիլ Միութենէն:

18. When was the Civil War fought?

Ե՞րբ տեղի ունեցաւ Քաղաքային Պատերազմն:

— From 1861-1865.

1861-էն մինչեւ 1865:

19. Who was President during the Civil War?

Ո՞վ էր Նախագահը՝ Քաղաքական Պատերազ-
մին ժամանակ:

— Abraham Lincoln.

Աբրահամ Լինքըն:

20. Name some famous commanders of the Civil
War.

Քաղաքային Պատերազմին հաջադարձը հրամանատարներուն ոմանց անունը տուէք:

— For the North: Grant, Sherman, Sheridan.

For the South: Lee, Jackson.

Հիւսիսայնոց կողմէն՝ Կրանդ, Շէրման, Շէրիման: Հարաւայնոց կողմէն՝ Լի, Ճաքսոն:

21. What was the result of the Civil War?

Քաղաքական Պատերազմին արդիւնքն ի՞նչ եղաւ:

— The Union was preserved and slavery was abolished.

Ապահովուեցաւ Միութիւնը եւ Գերութիւնը տապալեցաւ:

22. When was the Spanish-American War fought and why?

Ե՞րբ ծագեցաւ Սպանո-Ամերիկեան պատերազմը եւ ի՞նչ պատճառով:

— In 1898, because of Spain's ill treatment of Cuba.

1898-ին, եւ պատճառը Սպանիոյ Քուպայի հետ վատ վերաբերումն էր:

23. Who was the President during the Spanish War?

Ո՞վ էր Նախագահ Սպանիական պատերազմի ժամանակ:

— William McKinley.

Ուիլիլմ Մէքինլի:

24. What was the result of the war with Spain?

Սպանիական պատերազմին արդիւնքն ի՞նչ եղաւ:

— It resulted in making Cuba a Republic, while

Porto Rico and the Philippine Islands were ceded by Spain to the United States.

Պատերազմին իբր արդիւնք՝ Քուպա Հանրապետութեան վերածուեցաւ, եւ Փորթո Րիքօ ու Ֆիլիպին կղզիներն ալ Միացեալ Նահանգաց յանձնուեցան:

25. When was the Panama Canal opened, and what is its value?

Փանամայի Զբանցքը ե՞րբ բացուեցաւ եւ ի՞նչ արժանիք կ'ընծայէ:

— It was opened on August 15, 1914. It lessens the sailing distance from New York to San Francisco from 14,000 miles to 5,000 miles, and connects the Atlantic and the Pacific Oceans.

Զբանցքը բացուեցաւ Օգոստոս 15, 1914-ին: Նախապէս հարկ էր 14,000 մղոն ճամբորդել (նաով)՝ Նիւ Եորքէն Սան Ֆրանչիսքօ երթալու համար, հիմակ՝ 5,000 մղոն միայն: Միացուց նաեւ Ատլանտիկ եւ Խաղաղական Ովկիանոսները:

26. Name some famous American statesmen.

Որո՞նք էին Ամերիկեան կարգ մը հաջադարձ ղեւանդէտներն:

— Benjamin Franklin, Thomas Jefferson, author of Declaration of Independence. George Washington. Abraham Lincoln.

Պէննամին Ֆրանքլին, Թոմաս ձէֆըրսոն՝ Անկախութեան հռչակումին հեղինակն, Ճորճ Ուաշինկթօնն ու Աբրահամ Լինքոլն:

27. Where was the first capital of the United States? The second? The present capital?

Որո՞նք են Միացեալ Նահանգաց առաջին, երկ-
րորդ եւ ներկայ մայրաքաղաքներն:

— The first capital was Philadelphia, the second was New York. The present capital is the city of Washington, in the District of Columbia.

Առաջինը Ֆիլատէլֆիա էր, երկրորդը՝ Նիւ
Եորք: Հիմաւորան մայրաքաղաքն է Ուաշինկթըն,
Գօլմպիայի գաւառաբաժնին մէջ:

28. What are the colors of the American flag?

Ամերիկեան դրօշին գոյներն որո՞նք են:

— The colors of the American flag are red, white and blue.

Ամերիկեան դրօշին գոյներն են՝ կարմիր, ճեր-
մակ ու կապոյտ:

29. What do the thirteen stripes represent?

Ի՞նչ կը նշանակեն դրօշին տասներեք երիզներն:

— The thirteen stripes represent the first thirteen original States of America.

Տասներեք երիզները կը ներկայացնեն Ամերիկա-
յի առաջին տասներեք նահանգներն:

30. When is Flag Day?

Ե՞րբ է դրօշին Տօնը:

— June 14 of every year is our national Flag Day, because Congress adopted the American flag as official flag on June 14, 1777. Every loyal citizen has an American flag in his home, and displays

it on national holidays, such as Flag Day, June 14, and Independence Day, July 4.

Դրօշին Տօնն է ամէն տարուան Յունիս 14-ին, որովհետեւ Վեհաժողովն այդ օրն պաշտօնական հռչակեց Ամերիկեան դրօշակն: Ամէն հաւատարիմ քաղաքացի Ամերիկեան դրօշակ մը ունի տունը, դպր կը ցուցադրէ ազգային տօնական օրերուն, որպի-
սիք են՝ Դրօշին Տօնը, Յունիս 14-ին, եւ Անկախու-
թեան Տօնը Յուլիս 4-ին:

31. Why is the Fourth of July celebrated by all American citizens?

Ինչո՞ւ ամէն Ամերիկացի Յուլիս 4-ին տօն կը
պահէ:

— The Fourth of July is celebrated by all Amer-
ican citizens as "Independence Day," because the
"First Thirteen States" declared themselves free
and independent as a separate Nation from England
on July 4, 1776.

Յուլիս 2օրսը տօնական օր նկատուած է ամէն
Ամերիկեան քաղաքացիէ, որովհետեւ Յուլիս 4, 1776-
ին էր որ Առաջին Տասներեք Նահանգներն իրենք զի-
րենք Անգլիայէն անկախ հռչակեցին ու այդ օրը կո-
չեցին «Անկախութեան Օր»:

32. What is the Monroe Doctrine?

Ի՞նչ է Մընրօյի Վարդապետութիւնը:

— After the fall of Napoleon certain European
powers entered into a treaty known as the Holy
Alliance. The object of this compact was to uphold

absolute monarchy and assist in suppressing republican movements. The Holy Alliance promised to aid Spain in subduing the revolt of her Mexican and South American colonies. In 1823 James Monroe, then President of the United States, in a message to Congress, declared:—

The continents of North and South America are no longer open to colonization by European powers.

If any European power attempts to interfere with any independent American government, the United States will consider such interference an unfriendly act.

The United States will not meddle in European affairs.

These principles form the essence of the Monroe Doctrine.

Նաբոլէոնի անկումէն յետոյ՝ կարգ մը Եւրոպական պետութիւններ Սրբազան Նիզակահցութիւն անուամբ դաշնագրութիւն մը կնքեցին: Այս փաղանգին նպատակն էր պաշտպանել բացարձակ միապետութիւնը ու տապալել ոեւէ հանրապետական շարժում: Սրբազան Նիզակահցութիւնը խոստում ըրաւ ժամանակէ Սպանիոյ՝ իր Մեքսիկոյի ու Հարաւային Ամերիկայի դադթաւայրերն նուաճելու համար: 1823-ին Միացեալ Նահանգաց Նախագահը, Ճէյմզ Մընրօ, ուղերձի մը մէջ Վեհաժողովին առջեւ հրաչակեց հետեւեալը.—

«Ամերիկայի հիւսիսային եւ հարաւային երկրամասերը այսուհետեւ պէտք չէ ոեւէ Եւրոպական պետութեան դադթաւայր ըլլան:

«Եթէ ո'եւէ Եւրոպական պետութիւն փորձէ միջամտել Ամերիկեան ո'եւէ անկախ կառավարութեան զործերուն՝ Միացեալ Նահանգներ այս կարգի միջամտութիւն մը անբարեացակամ արարք պիտի նշկատէ:

«Միացեալ Նահանգներ Եւրոպական անցուղարձերու միջամտիս պիտի չըլլայ»:

Ահա այս սկզբունքներն են որ կը կազմեն Մընրօյի Վարդապետութեան էութիւնը:

Միացեալ Նահանգաց Նախագահներու անունները.—

1. George Washington, Virginia, 1789-97.
2. John Adams, Massachusetts, 1797-1801.
3. Thomas Jefferson, Virginia, 1801-09.
4. James Madison, Virginia, 1809-17.
5. James Monroe, Virginia, 1817-25.
6. John Quincy Adams, Massachusetts, 1825-29.
7. Andrew Jackson, Tennessee, 1829-37.
8. Martin Van Buren, New York, 1837-41.
9. William H. Harrison, Ohio (one month in office and died), 1841.
10. John Tyler, Virginia, (balance of term), 1841-45.
11. James K. Polk, Tennessee, 1845-49.
12. Zachary Taylor, Louisiana (one year four months in office, and died), 1849-50.
13. Millard Fillmore, New York, (balance of term), 1850-53.

14. Franklin Pierce, New Hampshire, 1853-57.
15. James Buchanan, Pennsylvania, 1857-61.
16. Abraham Lincoln, Illinois (one term and six weeks, 1861-65).
17. Andrew Johnson, Tennessee (balance of term), 1865-69.
18. Ulysses S. Grant, Illinois, 1869-77.
19. Rutherford B. Hayes, Ohio, 1877-81.
20. James A. Garfield, Ohio, (six months fifteen days in office, and died), 1881.
21. Chester A. Arthur, New York (three years five months fifteen days in office, and died), 1881-85.
22. Grover Cleveland, New York, 1885-89.
23. Benjamin Harrison, Indiana, 1889-93.
24. Grover Cleveland, New York, 1893-97.
25. William McKinley, Ohio (one term and part of second), 1897-1901.
26. Theodore Roosevelt, New York, 1901-09.
27. William H. Taft, Ohio, 1909-13.
28. Woodrow Wilson, New Jersey, 1913-21.
29. Warren G. Harding, Ohio, 1921-1923.
30. Calvin Coolidge, Massachusetts, 1923

ՍՊԱՌԵԼՈՒ ՄՕՏ Է

ՀԱՆՐԱԻ

“ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ”Ը

Հայկական Թատրոնի գլուխ ղարծոյը, որը՝ ար-
ժանացած է թէ Պոլսոյ եւ թէ Թիֆլիզի ու արտա-
սահմանի ամենաբարձր զնահատման: Կուզե՞ս Հայ
Շէյքսպիրը կարդալ, հատ մը զնէ, որովհետեւ շատ
սահմանափակ օրինակներ մնացած է:

ԳԻՆ 75 ՍԷՆՐ

ՊԵՐՊԵՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

H. G. BERBERIAN

837 Washington St. Boston, Mass.



ՍԵՓԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՐՊԵՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

Երգեցողութիւն Ս. Պատարազի, (Սպառած)	
Համառօտ ժամադիրք, Բ. Տիպ	 75
Թորոս Լեւոնի, Յերենց	 1.25
Հին Աստուածներ, Շանք	 75
Անգլ.-Հայ. Գրպ. Բառարան, Փրօֆ. Յակոբեան	. 50
Ընդարձակ Գրպանի Երգարան	 75
Ամերիկեան Քաղաքացի Ըլլալու Միջոցը, Բ.Տիպ	. 50

ԶԱՅՆԱԳՐՈՒԱԾ ԵՐԳՆԵՐ

Հայաստան, Կոմիտաս Վարդապետ	 50
Հով Արէք, Կոմիտաս Վարդապետ	 50
Հաբրբան, Կոմիտաս Վարդապետ	 50
Անտունի, Կոմիտաս Վարդապետ	 50
Իմ Զինարի Ետը, Կոմիտաս Վարդապետ	. . . 50
Իբրեւ Արծիւ	 50
Հերոս Մոնչեց	 50

Գին 50 ՍԷՆՔ

ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ՝ ՊԵՐՊԵՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

H. G. BERBERIAN

837 Washington Street, Boston, 11, Mass.



